մանէ յիշատակութիւն և 'ի դիրս Վանորէիցն Հայոց այսպէս. «Սահառունեաց վանք 'ի կողմն Սելովամայ, զոր Խոր- Վանք կոչեն, որ է Տեառնեղբօրն զոր վէմն ընկալաւ, այսինքն 'ի վիմի թաղեցաւ կամ քարկոծեցաւ։ Սակայն յետ աւերման սոյն վանացս զպատուական նշխարս Ս. Յակոբայ ամփոփեալ են 'ի տաճարի մեծի առաքելոյն Յակոբայ 'ի ներքոյ Աւագ Սեղանի, որպէս ունիմք հաստատուն աւանդութեամբ 'ի նախնեաց անտի։

ԳԼՈՒԽ Դ.

Ղշանք ժամանակի։ Ապստամբութիւն Հրէից։ Պաշարումն Երուսաղէմի։ Առումն և հիմնայատակ քանդումն նորին 'ի Տիտոսէ հանդերձ Տաճարաւն։ Կատարումն Հրէից և գերութիւն նոցա։

ԱՍԱՑՈՒՔ կարճ 'ի կարճոյ եւ վասն քաղաքական անցիցն Երուսաղէմի եւ դատաստանացն Աստուծոյ, զոր Փրկիչն գուշակեաց յառաջագոյն, եւ արտասուօք պատմեաց Աշակերտացն յաւուր մտանելոյ իւրոյ յԵրուսաղէմ. և առաւել մանր նկարեաց 'ի ցուցանել նոցա զչինուածս Տաճարին. զի այն ամենայն եկն 'ի կատարումն յետ 37 ամաց։

Այլ նախ քան զպատերազմն իրրեւ 'ի յայտնութենէ հրաման եղեւ եկեղեցւոյն Երուսաղէմի եւ առաքինեացն ելանել 'ի քաղաքէ անտի և ապաստանել 'ի Պելլա քաղաքի յայնկոյս Յորդանանու։ Զի եկեսցեն հասցեն ասէ Եւսեբի դատաստանք վրիժուցն Աստուծոյ 'ի վերայ քաղաքի թագաւորութեանն Հրէից եւ 'ի վերայ ամենայն երկրին Հրէաստանի. զի համարձակեցան 'ի Քրիստոս և յԱռաքեալս նորա, և ընկեցէ զազգն ամբարիշտ և զտոհմն անուղղայ 'ի տեղւոջէն յայնմանէ։ Բայց թէ ո՛րպիսի չարիք անցին ընդ ամենայն ազգն եւ չարաչար տանջանօք տանջեցան, և թէ քանի՛ բիւրք 'ի սով և 'ի ծարաւ և 'ի տառապանս ազգի ազգի մաշեցան, և գերեցան ամենայն քաղաքք Հրէաստանի եւ վանաւակուր եղեն, զայս ամենայն պատմէ